



**“Տելեքարդ” համակարգի օգտագործման կանոններ եւ պայմաններ “ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ” ՓԲԸ քարտատերերի համար**  
**Հետեւյալ տեղեկությունները շատ կարեւոր են: Ուշադիր ծանոթացեք դրանց եւ մի փոխանցեք նշված տվյալները այլ անձանց:**

**1. Հիմնական տեղեկություններ**

SMS-հաղորդագրություններ ուղարկելու համար հեռախոսահամարները <sup>1</sup>			<b>+7 903 797 6222</b> <b>+7 916 912 6372</b>
“Տելեքարդ” համակարգի ծառայությունները ակտիվացնելու կոդը (ուղարկվում է համակարգին միանալու ժամանակ !ACT հրահանգի եւ ակտիվացման կոդի միջեւ առանց միջակայքի, օգտագործվում են միայն լատինական տառերը):			<b>!ACT</b> _____ (ակտիվացման կոդ)
Քարտի անվանում	Քարտի №	Բանկի SMS-հաղորդագրություններում քարտի անվանումը	Հասանելիության կոդ

**2. Հաճախորդի կողմից ուղարկվող հարցումներ**

“Տելեքարդ” համակարգի ծառայության մատուցման համար հարցման բովանդակությունը	Հաճախորդի կողմից ուղարկվող SMS-հաղորդագրության ձևաչափը	Բանկի կողմից ուղարկվող SMS-հաղորդագրության պատասխանի օրինակ	Լրացում
Քարտի վերաբերյալ տեղեկությունների հարցում (հասանելի մնացորդ, օրեկան լիմիտ, քարտի կարգավիճակ)	!BAL ☺	dostupno: 1000 AMD; status: OTKRYTA; sutochnyi limit: 300 USD.	☺ – հասանելիության կոդ.
Հարցում քարտի օրական լիմիտի նշանակման/փոփոխման համար <sup>2</sup>	!LIM ☺ __ yyy	SUTOCHNYI LIMIT = 500 USD	yyy – լիմիտի չափը ԱՄՆ դոլարով __ - միջակայք (продел)
Քարտով իրականացվող հավաստագրվող գործարքների իրականացման ժամանակավոր դադարեցում	!BLC ☺	BLOKIROVANA	
Քարտով իրականացվող հավաստագրվող գործարքների իրականացման վերականգնում	!UBL ☺	OTKRYTA	
“Տելեքարդ” համակարգով տեղեկությունների ուղարկման դադարեցում	!STO ☺ !STO	OTPRAVKA UVEDOMLENIY OTKLUCHENA	!STO ☺ - նշված քարտի համար !STO – բոլոր քարտերի համար
“Տելեքարդ” համակարգով տեղեկությունների ուղարկման վերականգնում	!STA ☺ !STA	OTPRAVKA UVEDOMLENIY VKLUCHENA	!STA ☺ - նշված քարտի համար !STA – բոլոր քարտերի համար

**3. Բանկի կողմից ուղարկվող հաղորդագրություններ**

Բանկի կողմից ուղարկվող SMS-հաղորդագրության օրինակ	Հաղորդագրության պարունակությունը
VISA 4321; 07.04.08 11:53:30; POKUPKA; 85170 AMD; dostupno 56789	Տեղեկություն 7 ապրիլի 2008թ. ժամը 11:53-ին VISA Classic քարտով կատարված գործարքի վերաբերյալ, գնում 85170 դրամի. Հասանելի մնացորդ 56789 դրամ:
VISA,MC 07.04.08 11:53:30; Zachislenie; 45 000 AMD; __dostupno: 155 000	Մուտք Visa եւ MasterCard քարտերի հաշիվներին, կատարված 07.04.08թ. ժամը 11:53:30-ին 45 000

	դրամ գումարի չափով. Հասանելի է 155 000
Uvazhaemye klienty Telecard. Dlja vas izmenilsja nomer SMS servera sistemy Telecard. Teper SMS-zaprosy nado otpavljat na nomer +79169126372.	Բանկի կողմից ուղարկվող տեղեկատվական հաղորդագրություն

#### 4. Օգտագործման կանոններն ու պայմանները

**4.1.** “Տելեքարդ” համակարգի ծառայությունները հնարավորություն են ընձեռում Ձեզ, որպես “ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ” ՓԲԸ (այսուհետ Բանկ) կողմից թողարկված քարտի քարտատեր, բջջային կապի միջոցով արագ հետևել Ձեզ և Ձեր վտահետի անձանց տրամադրված վճարային քարտերի հասանելի մնացորդների չափը և դրա փոփոխությունները, մասնավորապես հսկել վճարային քարտերի միջոցով կատարված գործարքները: “Տելեքարդ” համակարգը թույլ է տալիս գրանցել քարտը քարտային հաշվի տիրոջ կամ քարտատիրոջ (վտահաված անձի) անունով: “Տելեքարդ” համակարգի հետ աշխատելու համար մեկ հաճախորդը կարող է օգտագործել միայն մեկ բջջային հեռախոսահամար, ընդորում մեկ բջջային հեռախոսահամարի օգտագործումը մի քանի հաճախորդների կողմից արգելվում է:

**4.2.** “Տելեքարդ” համակարգում գրանցվելիս Դուք կստանաք ակտիվացման կոդ և հասանելության կոդ, ինչպես նաև հեռախոսահամարներ SMS-հաղորդագրությունների փոխանակման համար: Դուք պետք է գաղտնի պահեք ակտիվացման և հասանելության կոդերը և օգտագործել դրանք միայն համակարգի հետ աշխատանքում կամ Բանկի հաճախորդների սպասարկման ծառայություն դիմելուց: Այս պահանջի խախտման դեպքում Բանկը պատասխանատվություն չի կրում Ձեր քարտերի և դրանցով իրականացված գործարքների վերաբերյալ տեղեկությունների երրորդ անձանց հայտնի դառնալու հետևանքների համար:

**4.3.** “Տելեքարդ” համակարգի օգտագործման համար Դուք պետք է ունենաք բջջային հեռախոս կարճ հաղորդագրությունների (SMS) փոխանակման հնարավորությամբ Beeline և VivaCell-MTS բջջային օպերատորների միջոցով:

**4.4.** Առաջին քարտի միացման ժամանակ “Տելեքարդ” համակարգի ծառայությունները ակտիվացնելու համար անհրաժեշտ է բջջային հեռախոսից ուղարկել հրահանգ համաձայն սույն Պայմանների 1-ին կետի:

**4.5.** “Տելեքարդ” համակարգին հնարավոր է դիմել միայն այն բջջային հեռախոսահամարից, որը Դուք նշել եք “Տելեքարդ” համակարգին միանալու դիմումի մեջ: Հեռախոսահամարի հետ հեռախոսի (կամ SIM-քարտի) կորստի դեպքում Ձեզ անհրաժեշտ է դիմել սույն Պայմանների կետ 4.11-ում նշված հեռախոսահամարներով և ժամանակավոր դադարեցնել “Տելեքարդ” համակարգով մատուցվող ծառայությունները: Եթե Դուք ցանկանում եք փոխել Ձեր հեռախոսահամարը “Տելեքարդ” համակարգում, ապա պետք է դիմել Բանկ և գրել գրանցման տեղեկությունների փոփոխման դիմում:

**4.6.** Տեղեկությունների հարցման համար ուղարկեք SMS-հաղորդագրություն համաձայն կետ 2-ում նշված ձեռագրի: Համակարգը կուղարկի Ձեզ պատասխան հաղորդագրություն, որի օրինակները բերված են կետ 2-ում: “Տելեքարդ” համակարգով հաղորդագրությունների փոխանակումը կարող է իրականացվել միայն լատինական այբուբենի տառերով:

**4.7.** Եթե Դուք ցանկանում եք լրացուցիչ քարտ գրանցել “Տելեքարդ” համակարգում, ապա Ձեզ անհրաժեշտ է դիմել Բանկ և գրել գրանցման տեղեկությունների փոփոխման դիմում: Լրացուցիչ գրանցված քարտի համար Դուք կստանաք դրա հասանելիության կոդը:

**4.8.** Եթե Դուք ցանկանում եք ժամանակավոր դադարեցնել “Տելեքարդ” համակարգում գրանցված Ձեր քարտի գործողությունը, ապա Ձեր կողմից ուղարկված SMS-հաղորդագրությունը դիմովելու է որպես քարտի գործողության ժամանակավոր դադարեցման դիմում, որը չի պահանջում գրավոր ձեռակերպում և ներկայացում Բանկ: Դուք կարող եք դադարեցնել Ձեր քարտի գործողությունը ցանկացած ժամկետով, որը չի գերազանցում քարտի գործողության ժամկետը: Քարտի գործողության

վերականգման հիմք է հանդիսանում Ձեր կողմից ուղարկված քարտով իրականացվող հավաստագրվող գործարքների իրականացման վերականգման SMS-հաղորդագրությունը: Քարտի կորստի դեպքում Դուք նույնպես կարող եք ուղարկել համապատասխան SMS-հաղորդագրություն, սակայն այս դեպքում Դուք պետք ներկայացնեք բանկ գրավոր դիմում քարտի կորստի և գործողության դադարեցման վերաբերյալ: Ցանկացած դեպքում, մինչև Բանկի կողմից գրավոր դիմումի ստացումը տվյալ քարտով իրականացված բոլոր գործարքների պատասխանատվությունը կրում է քարտային հաշվի տերը:

**4.9.** Եթե Դուք ցանկանում եք ժամանակավոր դադարեցնել հարցումների ստացումը կամ ուղարկումը Ձեր քարտերով (կամ կոնկրետ մեկ քարտով), դուք կարող եք ուղարկել “Տելեքարդ” համակարգին համապատասխան հարվցում: Հարցումների ստացման և ուղարկման դադարեցման ժամկետը սահմանափակված է Ձեր քարտի գործողության ժամկետով: Հարցումների ստացման և ուղարկման վերականգման հիմք է հանդիսանում Ձեր կողմից ուղարկված համապատասխան SMS-հաղորդագրությունը:

**4.10.** Միայլ ձեռակերպած հարցումներին “Տելեքարդ” համակարգը չի ձեռավորում պատասխան հաղորդագրություններ: Եթե դուք համապատասխան ձեռագրի հարցում եք ուղարկել, բայց նշել եք սխալ գործողություն, օրինակ քարտի գործողության վերականգնում արդեն վերականգնված քարտով, ապա համակարգը կտեղեկացնի Ձեզ սխալի մասին:

**4.11.** “Տելեքարդ” համակարգով ծառայությունների ստացման դադարեցման համար դուք կարող եք դիմել Բանկ և ներկայացնել գրավոր դիմում, կամ գանգահարել ք.Երեւան +37410 541772, ք.Մոսկվա +7 (495) 980-4141, +7 (495) 913-7999. Հերթապահ օպերատորը կհարցի Ձեր գաղտնաբառը, որը Դուք նշել եք քարտի տրամադրման դիմումի մեջ կամ այլ տեղեկություն Ձեր ինքնությունը ստուգելու նպատակով:

**4.12.** Քարտային հաշվի փակման և/կամ քարտի գործողության ժամկետը լրանալուց “Տելեքարդ” համակարգը ավտոմատ կերպով կդադարեցնի ծառայությունների մատուցումը այդ քարտով:

**4.13.** “Տելեքարդ” համակարգի ծառայությունները վճարովի են: Համակարգի ծառայությունների մատուցման համար գործող սակագներին համաձայն, Բանկը անակցեպտ կերպով ծառայության մատուցման գումարը գանձում է համակարգում գրանցված քարտի քարտային հաշվից (հաշիվներից): Բանկը իրավունք է վերապահում իրեն փոփոխել Սակագները՝ տեղեկացնելով այդ մասին Բանկի ինտերնետ-կայքի, Բանկում տեղակայված տեղեկատվական պատասխանների միջոցով:

**4.14.** “Տելեքարդ” համակարգի միջոցով Բանկը կարող է ուղարկել Ձեզ տեղեկատվական SMS-հաղորդագրություններ: Այդ հաղորդագրությունները Ձեր համար հանդիսանում են անվճար:

**4.15.** Ձեր կողմից “Տելեքարդ” համակարգին ուղարկվող SMS-հաղորդագրությունների համար Դուք վճարելու եք ինքնուրույն համաձայն Ձեր բջջային կապի օպերատորի սակագների:

**4.16.** Բանկը պատասխանատվություն չի կրում SMS-հաղորդագրությունների առաքման և ուղարկման արագության համար և չի երաշխավորում գաղտնիությունն ու տվյալների ամբողջականությունը, որոնք փոխանցվում են SMS-հաղորդագրությունների միջոցով:

<sup>1</sup> SMS ուղարկելու համար նախատեսված հեռախոսահամարները Բանկի կողմից կարող են միակողմանիորեն փոփոխվել՝ դրա մասին տեղյակ պահելով Բանկի ինտերնետ-կայքի, տեղեկատվական պատասխանների SMS-հախորդագրություն ուղարկելու միջոցով

<sup>2</sup> Քարտի օրեկան լիմիտը սահմանվում է միայն ԱՄՆ դոլարով, անկախ քարտային հաշվի տարադրամից, գործարքի կատարման պահին վճարային համակարգի փոխարժեքով: